«ՄԱՐՏՈՒՆՈՒ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2025թ.

ԵՐԵՎԱՆ 2026

ՄԱՐՏՈՒՆՈՒ
ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
Martuni Medical Center

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՆԿԱԽ ԱՌԻԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	3
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ	6
ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ	7
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ	8
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ	9
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	10

«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ
22 Հանրապետության փող.
0010 Երևան, Հայաստանի Հանրապետություն
Հեռ. +374(10) 544-301/307/309
Էլ. փոստ: info@bakertillyarmenia.com
www.bakertilly.am

25.06.2026թ.
N 032625

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ
Գլխավոր տնօրեն
Վահե Գևորգյան

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Մարտունու բժշկական կենտրոն» ՓԲԸ բաժնետիրոջը

Վերապահումով կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Մարտունու բժշկական կենտրոն» ՓԲԸ (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով, բացառությամբ «Վերապահումով կարծիքի հիմք» բաժնում նկարագրված հարցի հնարավոր ազդեցության, կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Վերապահումով կարծիքի հիմք

Ընկերությունը չի իրականացրել պաշարների գույքագրում 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և մենք չկարողացանք ստանալ բավարար և համապատասխան աուդիտորական ապացույցներ պաշարների առկայության և վիճակի վերաբերյալ այլընտրանքային աուդիտորական ընթացակարգերի միջոցով: Ֆինանսական հաշվետվություններում պաշարները ներկայացված են 81,711 հազար դրամ գումարով: Հետևաբար մենք չկարողացանք որոշել, թե անհրաժեշտ էին արդյոք ճշգրտումներ պաշարների, վաճառքի ինքնարժեքի և ֆինանսական հաշվետվությունների այլ տարրերի նկատմամբ:

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր վերապահումով կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

Ընկերության 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, ով 2025թ. հուլիսի 29-ին արտահայտել է ձևափոխված կարծիք այդ հաշվետվությունների վերաբերյալ:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Ընկերության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին վերահսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Սեդրակ Բադալյան

Աուդիտոր

25 հունիսի 2026թ.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	Ծանոթ.	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	3,574,351	3,616,941
Ոչ նյութական ակտիվներ		-	23
Հետաձգված հարկային ակտիվներ	5	387	510
		3,574,738	3,617,474
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	6	81,711	84,164
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	7	129,646	56,043
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	8	2,210	26,140
		213,567	166,347
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		3,788,305	3,783,821
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Կապիտալ և պահուստներ	9		
Բաժնետիրական կապիտալ		3,355,720	3,355,720
Էմիսիոն եկամուտ		-	20,049
Կուտակված շահույթ		55,849	33,078
		3,411,569	3,408,847
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարձակալություն	10	42,019	-
Ակտիվներին վերաբերող շնորհներ	11	138,450	229,075
		180,469	229,075
Ընթացիկ պարտավորություններ			
Վարձակալություն	10	18,700	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	12	158,126	130,727
Շահութահարկի գծով պարտավորություն		1,307	-
Եկամուտներին վերաբերող շնորհներ	13	18,134	15,172
		196,267	145,899
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		3,788,305	3,783,821

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2026թ. հունիսի 25-ին:

Անդրանիկ Հարությունյան — Տնօրեն

Վարդ Բաղդասարյան — Գլխ. հաշվապահ

1-24 ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱԶՄՈՒՄ ԵՆ ՍՈՒՅՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍԸ

ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	Ծանոթ.	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հասույթ	14	1,520,790	1,316,960
Վաճառքի ինքնարժեք	15	(1,529,006)	(1,259,435)
Համախառն շահույթ/(վնաս)		(8,216)	57,525
Այլ եկամուտ	16	196,789	191,731
Վարչական ծախսեր	17	(175,773)	(245,069)
Այլ ծախսեր		(1,757)	-
Գործառնական գործունեությունից շահույթ		11,043	4,187
Ֆինանսական եկամուտ/(ծախսեր), զուտ		(5,257)	-
Շահույթ մինչև հարկերը		5,786	4,187
Շահութահարկի գծով ծախս	18	(1,430)	(759)
Տարվա շահույթ		4,356	3,428
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		4,356	3,428

1-25 ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱԶՄՈՒՄ ԵՆ ՍՈՒՅՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍԸ

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	Բաժնե-տիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Կուտակ-ված շահույթ	Ընդամենը
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	239,740	20,049	85,602	345,391
Տարվա շահույթ	-	-	3,428	3,428
Նախորդ ժամանակահատվածի ճշգրտումներ	-	-	(55,952)	(55,952)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	(52,524)	(52,524)
Բաժնետիրական կապիտալի համալրում	3,115,980	-	-	3,115,980
Գործարքներ սեփականատերերի հետ	3,115,980	-	-	3,115,980
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,355,720	20,049	33,078	3,408,847
Տարվա շահույթ	-	-	4,356	4,356
Վերագրում կուտակված շահույթին	-	(20,049)	20,049	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	(20,049)	24,405	4,356
Շահաբաժիններ	-	-	(1,634)	(1,634)
Գործարքներ սեփականատերերի հետ	-	-	(1,634)	(1,634)
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,355,720	-	55,849	3,411,569

1-25 ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱԶՄՈՒՄ ԵՆ ՍՈՒՅՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍԸ

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա շահույթ	4,356	3,428
Ճշգրտումներ		
Մաշվածություն և ամորտիզացիա	160,777	139,559
Ֆինանսական ծախս	5,257	-
Շահութահարկի գծով ծախս	1,430	42
Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները	171,820	143,029
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	(73,603)	1,947
Պաշարների փոփոխություն	2,453	(975)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	27,399	62,081
Շնորհներ	(87,663)	(102,980)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ	40,406	103,102
Վճարված տոկոսներ	(5,000)	-
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	35,406	103,102
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների ձեռքբերում	(118,164)	(41,616)
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(118,164)	(41,616)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վարձակալական պարտավորություններ	60,462	-
Նախորդ ժամանակահատվածի ճշգրտումներ	-	(55,952)
Վճարված շահաբաժիններ	(1,634)	-
Ֆինանսավորման գործունեությունից ստացված/ (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ	58,828	(55,952)
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ աճ/(նվազում)	(23,930)	5,534
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում	26,140	20,606
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում	2,210	26,140

1-25 ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱԶՄՈՒՄ ԵՆ ՍՈՒՅՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍԸ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Մարտունու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն (այսուհետ՝ «Ընկերություն») ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է 2009թ. մարտի 20-ին, գրանցման համար՝ 222.120.01074:

Ընկերությունը ստեղծվել է ՀՀ Կառավարության 2007թ. սեպտեմբերի 27-ի թիվ 1218-Ն որոշման համաձայն:

Ընկերությունը հանդիսանում է ստրատեգիական կարևորության բժշկական կենտրոն, քանի որ տեղակայված է Վայոց Ձորի և Գեղարքունիքի մարզի խաչմերուկում, սպասարկում է նաև սահմանամերձ շրջանների ազգաբնակչությանը:

Ընկերությունը բազմապրոֆիլ հիվանդանոց է, որը ստեղծվել է «Մարտունու հիվանդանոց» ՊՓԲԸ և «Մարտունու պոլիկլինիկա» ՊՓԲԸ միաձուլման արդյունքում:

Ընկերության հիմնադիրն է Հայաստանի Հանրապետությունը, ի դեմս առողջապահության նախարարության, որին վերապահված են Ընկերության կողմից տեղաբաշխված 100 տոկոս բաժնետոմսերի կառավարման լիազորությունները:

Ընկերության գտնվելու վայրն է՝ ՀՀ Գեղարքունիք մարզ, ք. Մարտունի, Գետափնյա 2-րդ փող., 16/1:

2 ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՔԵՐ

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից: Հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով:

2.2 Չափման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվեգրման սկզբունքով (բացառությամբ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության) և սկզբնական արժեքի մեթոդով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով (եթե այլ բան նշված չէ), քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Ընկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի

դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 23-ում:

2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընթացիկ տարում Ընկերությունն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2025թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև:

Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2025թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար

Ներքոհիշյալ նոր ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2025թ., որևէ էական ազդեցություն չեն ունեցել Ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվությունների վրա:

- Փոխանակելիության բացակայություն» (ՀՀՄՍ 21 փոփոխություն)

Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից

ՖՀՄՍ7 *«Ֆինանսական գործիքներ. բացահայտումներ» - Բացահայտումներ*

ՖՀՄՍ 7-ում կատարված խմբագրումը պահանջում է բացահայտել իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքով չափվող բաժնային գործիքների իրական արժեքով վերաչափումներից այլ համապարփակ եկամուտներ և ծախսերը՝ առանձնացնելով այն մասը որը վերաբերում է ընթացիկ ժամանակաշրջանում ապաճանաչված ակտիվներին:

Նաև պահանջվում է առանձին բացահայտել ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների, ինչպես նաև պարտադիր այլ համապարփակ ֆինանսական արդյունքով չափվող ֆինանսական ակտիվների գծով պայմանագրային այն պայմանները, որոնց պատճառով կարող են փոփոխվել պայմանագրային հոսքերի գումարները և ժամկետները, և որոնք հանդիսանում են պայմանական դեպքեր և ուղղակի կապված չեն բազային պարտքային համաձայնագրի ռիսկի և արժեքի փոփոխության հետ:

ՖՀՄՍ 7-ի այս փոփոխությունն ուժի մեջ է մտնում 2026թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

ՖՀՄՍ9 «Ֆինանսական գործիքներ» - Առևտրային դեբիտորական պարտքերի չափումը

ՖՀՄՍ 9-ում կատարված խմբագրմամբ պարզաբանվում է որ առևտրային դեբիտորական պարտքերը ճանաչման պահին պետք է չափվեն այն արժեքով, որը որոշվել է կիրառելով ՖՀՄՍ 15 «Հասույթ գնորդների հետ պայմանագրերից» հաշվապահական ստանդարտը:

ՖՀՄՍ 9-ի այս փոփոխությունն ուժի մեջ են մտնում 2026թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

ՖՀՄՍ9 «Ֆինանսական գործիքներ» - Վարձակալության գծով պարտավորությունների ապաճանաչում

ՖՀՄՍ 9-ում կատարված լրացմամբ հստակեցում է որ ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման պահին հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման միջև տարբերությունը

շահույթում կամ վնասում ճանաչելու պահանջը պետք է կիրառել նաև վարձակալության գծով պարտավորությունների նկատմամբ:

ՖՀՄՍ 9-ի այս փոփոխությունն ուժի մեջ է մտնում 2026թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

ՖՀՄՍ9 «Ֆինանսական գործիքներ» - Էլեկտրոնային վճարային համակարգով մարված ֆինանսական պարտավորությունների ապաճանաչումը

Համաձայն ՖՀՄՍ 9-ում կատարված խմբագրման էլեկտրոնային վճարման համակարգի միջոցով ֆինանսական պարտավորությունների մարման դեպքում պարտավորությունը կարող է ապաճանաչվել վճարումը կատարելու պահին, եթե կազմակերպությունը չի կարող չեղարկել, կանգնեցնել կամ հետ կանչել վճարումը, օգտագործել այդ միջոցները և վճարման համակարգի հետ կապված ռիսկը աննշան է:

ՖՀՄՍ 9-ի այս փոփոխությունն ուժի մեջ է մտնում 2026թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

ՖՀՄՍ9 «Ֆինանսական գործիքներ» - Պայմանական հատկանիշով ֆինանսական ակտիվների - հոսքերը որպես բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ

Համաձայն ՖՀՄՍ 9-ում կատարված խմբագրման ֆինանսական ակտիվի գծով բավարարված է հոսքերը որպես բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ համարվելու պայմանը, եթե ակտիվի հոսքերը պայմանական են (օրինակ կախված են արտանետված ջերմոցային գազերի ծավալից), պայմանագրային հոսքերը վերանայումից առաջ և հետո համապատասխանում են բազային վարկային համաձայնագրի բնութագրերին, ինչպես նաև հոսքերի վերանայումը կապակցված է բազային վարկային ռիսկին կամ վերանայված հոսքերը նշանակալիորեն չեն տարբերվում շուկայում համանման ֆինանսական ակտիվի հոսքերից:

ՖՀՄՍ 9-ի այս փոփոխությունն ուժի մեջ է մտնում 2026թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

ՀՀՄՍ21 «Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքները» - Վերահաշվարկումը գերսղաճային տնտեսության արժույթով

ՀՀՄՍ 21-ում կատարված խմբագրման համաձայն, եթե ներկայացման արժույթը գերսղաճային տնտեսության արժույթ է, իսկ ֆունկցիոնալ արժույթը ոչ, ապա ֆինանսական հաշվետվությունները (արտերկրյա ստորաբաժանման արդյունքները և ֆինանսական վիճակը)՝ ներառյալ համադրելի ցուցանիշները, պետք է վերահաշվարկվեն ներկայացվող ամենավերջին հաշվետու ժամանակաշրջանի փակման փոխարժեքով:

ՀՀՄՍ 21-ի այս փոփոխությունը ուժի մեջ է մտնում 2027թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

ՖՀՄՍ18 «Ֆինանսական հաշվետվություններում ներկայացումը և բացահայտումը», Փոփոխություններ ՀՀՄՍ 7 «Հաշվետվություն դրամական հոսքերի մասին» հաշվապահական ստանդարտում

2024թ.-ին թողարկվել է ՖՀՄՍ 18 հաշվապահական ստանդարտը, որը վերաբերում է ֆինանսական հաշվետվությունների ներկայացմանը և փոխարինում է «ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը» ՀՀՄՍ 1-ին:

Նշանակալի փոփոխության է ենթարկվել ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության (նախկին շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը) բովանդակությունը, որտեղ պահանջվում է ներկայացնել եկամուտներն ու

ծախսերը ըստ գործառնական, ներդրումային, ֆինանսավորման, շահութահարկ և ընդհատված գործառնություններ բաժինների:

ՖՀՄՍ 18-ի կիրառմամբ դրամական հոսքերի մասին հաշվետվությունում չի թույլատրվում տոկոսների և շահաբաժինների գծով հոսքերը դասակարգել որպես գործառնական հոսքեր: Նաև դրամական հոսքերի մասին հաշվետվությունը անուղղակի մեթոդով պատրաստելիս սկզբնական ցուցանիշ է համարվում գործառնական գործունեությունից շահույթը կամ վնասը:

ՖՀՄՍ 18-ը և ՀՀՄՍ 7-ի համապատասխան փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2027թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

ՖՀՄՍ19 «Հանրային հաշվետվողականություն չունեցող դուստր ընկերություններ. բացահայտումներ»

2024թ.-ին թողարկվել է ՖՀՄՍ 19 հաշվապահական ստանդարտը, որը հնարավորություն է տալիս հանրային հաշվետվողականություն չունեցող կազմակերպությունների, որոնք նաև հանդիսանում են ՖՀՄՍ-ների համապատասխան հրապարակվող ֆինանսական հաշվետվություններ ներկայացնող կազմակերպության դուստր ընկերություն, ներկայացնել ավելի պակաս բացահայտումներ քան պահանջվում են այլ ՖՀՄՍ-ներով:

ՖՀՄՍ 19-ի կիրառումը պարտադիր չէ և նշված պայմաններին բավարարող կազմակերպությունը կարող է այն կիրառել մեկ հաշվետու ժամանակաշրջանում և հրաժարվել դրա կիրառումից մեկ այլ ժամանակաշրջանում:

ՖՀՄՍ 19-ը ուժի մեջ է մտնում 2027թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

3 ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

3.1 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը. 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 381.36 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 449.01 դրամ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 396.56 դրամ, 1 եվրոն՝ 413.89 դրամ): Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

3.2 Հիմնական միջոցներ

Ընկերության շենքերը և շինությունները հաշվառվում են վերագնահատված արժեքով: Մնացած հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռքբերմանն գինը, ներառյալ ներմուծման տուրքերը և չվերադարձվող գնման հարկերը և այլ ուղղակիորեն վերագրելի ծախսերը: Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

Արտադրական, վարձակալության կամ վարչական նպատակներով կամ դեռևս չորոշված նպատակներով շինարարության ընթացքում գտնվող գույքը հաշվառվում է սկզբնական արժեքով՝ հանած ճանաչված արժեզրկման կորուստը: Սկզբնական արժեքը ներառում է ուղղակիորեն վերագրելի ծախսերը, տեղանքի նախապատրաստման, տեղադրման և հավաքման ծախսերը, մասնագիտական վարձատրությունը, իսկ որակավորվող ակտիվների համար՝ փոխառության ծախսերը, որոնք կապիտալացվել են Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության համաձայն:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրվող բաղադրիչի հաշվեկշռային արժեքով: Հետագա այլ ծախսումները կապիտալացվում են, եթե այդ ծախսումներից ապագա տնտեսական օգուտներ են ստացվելու: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ վերանորոգման և սպասարկման ծախսերը, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների միավորի յուրաքանչյուր մասի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածությունը սկսվում է, երբ ակտիվները հասանելի են օգտագործման համար:

Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր	- 20 տարի
Սարքավորումներ	- 5 տարի
Տրանսպորտային միջոցներ	- 5 տարի
Տնտեսական գույք	- 5-10 տարի
Այլ	- 8 տարի:

3.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետների ընթացքում, որը հաշվապահական հաշվառման ծրագրերի ապահովման համար կազմում է 4 տարի: Բացառիկ դեպքերում ոչ նյութական ակտիվները սկզբնապես համարվում են անորոշ օգտակար ծառայությամբ մինչև այն պահը, երբ հնարավոր կդառնա խելամիտ օգտակար ծառայության գնահատումը:

3.4 Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Օգտակար ծառայության անորոշ ժամկետ ունեցող ակտիվները չեն ենթարկվում ամորտիզացիայի և տարեկան ստուգվում են արժեզրկման համար: Ամորտիզացիայի ենթակա ակտիվները վերանայվում են արժեզրկման համար, երբ իրադարձությունները կամ հանգամանքների փոփոխությունները ցույց են տալիս, որ հաշվեկշռային արժեքը չի կարող վերականգնվել: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է այն գումարի համար, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է դրա փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը զուտ վաճառքի գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամական միջոց ստեղծող միավորի փոխհատուցվող գումարը գնահատվում է պակաս դրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամական միջոց ստեղծող միավորի

հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև դրա փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստները ճանաչվում են որպես ծախս անմիջապես, եթե համապատասխան ակտիվը չի հաշվառվում վերագնահատված գումարով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատման նվազում:

Երբ արժեզրկումից կորուստը հետագայում հակադարձվում է, ակտիվի կամ դրամական միջոց ստեղծող միավորի հաշվեկշռային արժեքը մեծացվում է մինչև դրա փոխհատուցվող գումարի վերանայված չափը, բայց այնպես, որ ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը կորոշվեր, եթե նախորդ տարիներին ակտիվի կամ դրամական միջոց ստեղծող միավորի համար ճանաչված արժեզրկումից կորուստ չճանաչվեր: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ, եթե համապատասխան ակտիվը չի հաշվառվում վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատման աճ:

3.5 Պաշարներ

Պաշարները ակտիվներ են, որոնք պահվում են վաճառքի համար սովորական գործունեության ընթացքում կամ նյութերի կամ պարագաների տեսքով՝ արտադրության գործընթացում կամ ծառայությունների մատուցման ժամանակ սպառվելու նպատակով: Պաշարներ են ճանաչվում նաև այնպիսի իրեր, ինչպիսիք են պահեստամասերը, պահեստային սարքավորումները և սպասարկման սարքավորումները, եթե դրանք չեն համապատասխանում հիմնական միջոցների սահմանմանը:

Պաշարները ներկայացված են սկզբնական արժեքից և զուտ իրացման արժեքից նվազագույնով: Զուտ իրացման արժեքը սովորական գործունեության ընթացքում գնահատված վաճառքի գինն է՝ հանած ավարտման և ուղղակի տվյալ գնով իրացման գնահատված ծախսերը: Պաշարների արժեքը հիմնված է «առաջինը մուտք՝ առաջինը ելք» սկզբունքի վրա և ներառում է պաշարների ձեռքբերման և դրանց առկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված ծախսերը:

3.6 Պետական շնորհներ

Պետական շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Ընկերությունը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Պետական շնորհները, որոնց հիմնական պայմանը Ընկերության կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ և սիստեմատիկորեն փոխանցվում են շահույթ կամ վնաս՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Գույքի տեսքով ստացված շնորհները հաշվառվում են դրանց անվանական արժեքով: Բացառիկ դեպքերում, երբ վերջինս առկա չէ, շնորհը գնահատվում է դրա իրական արժեքով:

Այլ պետական շնորհները ճանաչվում են սիստեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են: Պետական շնորհը, որը հատկացվում է Ընկերությանը՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

Պետական շնորհների հաշվառման մոտեցումները կիրառվում են նաև ոչ պետական աղբյուրներից ստացված շնորհների նկատմամբ:

3.7 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորություններն ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով հաշվառվող,
- իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- իրական արժեքով չափվող՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Ընկերության՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, արտացոլված են ֆինանսական ծախսերում, ֆինանսական եկամուտում կամ այլ ֆինանսական արդյունքներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որն արտացոլված է այլ ծախսերում: Ընկերության ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 21-ում:

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին և դասակարգված չեն որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով.

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բովանդակությամբ հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն դեպքերում, երբ զեղչման ազդեցությունն աննշան է, զեղչում չի կատարվում: Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Ընկերության դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային դեբիտորական պարտքերը և այլ դեբիտորական պարտքերի մեծամասնությունը:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Ընկերությունը հաշվառում է առևտրային և այլ դեբիտորական պարտքերը օգտվելով պարզեցված մոտեցումից և կորստի գծով պահուստը ձևակերպում է որպես գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ: Դրանք իրենցից

ներկայացնում են պայմանագրային դրամական հոսքերի ակնկալվող դադարեցումները՝ հաշվի առնելով ֆինանսական ակտիվի գործողության ժամկետի ամբողջ ընթացքում ցանկացած պահի չմարվելու հնարավորությունը: Ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելիս Ընկերությունն օգտագործում է պահուստի մատրիցան՝ ելնելով պատմական փորձից, արտաքին ցուցանիշներից և ապագային առնչվող տեղեկատվությունից:

Ընկերությունը գնահատում է առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկումը հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ, դրանք խմբավորվել են՝ ելնելով ժամկետանց օրերից:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցների համարժեքները կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Ընկերությունը դասակարգում է ներդրումները որպես դրամական միջոցների համարժեքներ այն դեպքում, եթե դրանք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են վարկերը և փոխառությունները, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը, վարձակալության գծով պարտավորությունները: Ընկերության ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են ծանոթագրություն 21-ում:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով: Այնուամենայնիվ, եթե զեղչման ազդեցությունը էական չէ, Ընկերությունը առևտրային կրեդիտորական պարտքերը հաշվառում է անվանական արժեքով:

Ֆինանսական ակտիվների արժեզրկումը

Ընկերությունը ճանաչում է ակնկալվող պարտքային կորուստների (ԱՊԿ) գծով պահուստը պարտքային ֆինանսական ակտիվների համար, բացառությամբ այն ակտիվների, որոնք չափվում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: ԱՊԿ-ները հիմնված են պայմանագրային դրամական հոսքերի, որոնք վճարվում են պայմանագրի համաձայն և այն բոլոր դրամական հոսքերի տարբերության վրա, որոնք ակնկալվում է ստանալ՝ զեղչված համապատասխան արդյունավետ տոկոսադրույքով:

Ընկերությունը գնահատում է արժեզրկումները ֆինանսական ակտիվի գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարի չափով, բացառությամբ ստորև նշված գործիքների, որոնց համար Ընկերությունը չափում է ֆինանսական գործիքի ակնկալվող պարտքային կորուստների պահուստը այն գումարի չափով, որը հավասար է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներին.

- հաշվետու ամսաթվի դրությամբ դեֆոլտի ցածր ռիսկով ներդրումները և տրամադրված փոխառությունները,
- այլ ֆինանսական գործիքներ, որոնց գծով պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից հետո էականորեն չի աճել:

Ընկերությունը ֆինանսական ակտիվը համարում է պարտազանցված (պատքային առումով արժեզրկված), երբ պայմանագրային վճարումները ժամկետանց են 90 օր: Այնուամենայնիվ, որոշ դեպքերում Ընկերությունը կարող է նաև ֆինանսական ակտիվը համարել պարտազանցված, երբ

ներքին կամ արտաքին տեղեկատվությունը ցույց է տալիս, որ Ընկերությունը դժվար թե ստանա պայմանագրային չմարված գումարները: Ֆինանսական ակտիվը դուրս է գրվում, երբ պայմանագրային դրամական հոսքերը վերականգնելու ողջամիտ ակնկալիք չկա:

12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները ակնկալվող պարտքային կորուստների մի մասն են, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում հնարավոր պարտազանցման դեպքերից:

Ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները ակնկալվող պարտքային կորուստներ են, որոնք առաջանում են բոլոր հնարավոր պարտազանցման դեպքերից ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի ընթացքում:

Առևտրային դեբիտորական պարտքերի գծով արժեզրկումը գնահատվում է գործողության ամբողջ ժամանակահատվածի ԱՊԿ-ի չափով:

Ակնկալվող պարտքային կորուստները պարտազանցում տեղի ունենալու հավանականության (PD), պարտազանցման պահին պարտքի գումարի (EAD) և պարտազանցման դեպքում կորստի գումարի (LGD) արտադրյալն է: Նշված ցուցանիշները սահմանվում են հետևյալ կերպ.

Պարտազանցում տեղի ունենալու հավանականություն (PD). այն որոշակի ժամանակահատվածի ընթացքում պարտազանցման հավանական լինելու գնահատումն է:

Պարտքի գումարը պարտազանցման պահին (EAD). այն ապագա պարտազանցման ամսաթվի դրությամբ պարտքի գնահատված գումարն է՝ հաշվի առնելով հաշվետու ամսաթվից հետո պարքտի գումարի ակնկալվող փոփոխությունները:

Կորուստը պարտազանցման դեպքում (LGD). այն արտահայտում է կորստի գնահատված գումարը, որը կառաջանա, եթե որոշակի պահի տեղի ունենա պարտազանցում: Այն հիմնված է վճարման ենթակա պայմանագրային դրամական հոսքերի և այն դրամական հոսքերի տարբերության վրա, որոնք Ընկերությունն ակնկալում է ստանալ, և արտահայտվում է որպես պարտազանցման պահին պարտքի գումարի տոկոս:

Արժեզրկման նպատակով ֆինանսական գործիքները դասակարգվում են փուլ 1, փուլ 2, փուլ 3, ինչպես նկարագրված է ստորև.

- Փուլ 1 – 12-ամսյա ԱՊԿ-ը գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների այն մասն է, որը ներկայացնում է ֆինանսական գործիքի գծով պարտավորությունների չկատարման դեպքերի արդյունք հանդիսացող ԱՊԿ-ները, որոնք հնարավոր են հաշվետու ամսվան հաջորդող 12 ամիսների ընթացքում: Փուլ 1-ում դասկարգվում են այն ֆինանսական ակտիվները, որոնց գծով հաշվետու ամսաթվի դրույթամբ պարտքային ռիսկի նշանակալի աճ տեղի չի ունեցել, ինչպես նաև այն ակտիվները, որոնց պարտքային ռիսկը բարելավվել է և ակտիվը վերադասակարգվել է փուլ 2-ից:
- Փուլ 2 - երբ ֆինանսական ակտիվը ստեղծման պահից ունեցել է պարտքային ռիսկի էական աճ, սակայն պարտազանցում տեղի չի ունեցել: Ընկերությունը ձևավորում է գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների պահուստ, սակայն տոկոսային եկամուտները հաշվեգրվում են համախառն ամորտիզացված արժեքից: Փուլ 2-ում դասակարգված ֆինանսական ակտիվները նաև ներառում են մնացորդներ, որոնցում պարտքային ռիսկը բարելավվել է և ակտիվը վերադասակարգվել է փուլ 3-ից:
- Փուլ 3 – պարտքային առումով արժեզրկված (պարտազանցված) պարտքային գործիքների մասով Ընկերությունը ձևավորում է ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների պահուստ, իսկ տոկոսային եկամուտները հաշվեգրվում են զուտ ամորտիզացված արժեքից::

3.8 Սեփական կապիտալ

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով:

Բաժնետիրական կապիտալն իրենից ներկայացնում է թողարկված բաժնեմասերի նոմինալ արժեքը:

Կուտակված շահույթը/(վնասը) ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը/(վնասը):

Սեփականատիրոջ հետ բոլոր գործարքներն առանձին գրանցված են սեփական կապիտալում:

Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

3.9 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

(ա) աշխատավարձերը և պարգևավճարները,

(բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները,

Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

(ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքներն ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,

(բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Պարգևավճարներ

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Ընկերությունն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Ընկերությունը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

3.10 Հասույթ

Հասույթը ձևավորվում է հիմնականում բժշկական ծառայությունների մատուցումից:

Որոշելու համար, թե արդյոք անհրաժեշտ է ճանաչել հասույթ, թե ոչ, Ընկերությունն առաջնորդվում է 5-քայլի գործընթացով.

1 Բացահայտել հաճախորդի հետ պայմանագիրը

2 Բացահայտել կատարման պարտականությունները

3 Որոշել գործարքի գինը

4 Բաշխել գործարքի գինը կատարման պարտականությունների միջև

5 Ճանաչել հասույթը, երբ կատարման պարտականությունը(ները) բավարարված են

Հասույթը ճանաչվում է կամ ժամանակի մեջ որևէ պահին կամ ժամանակի ընթացքում, երբ Ընկերությունը բավարարում է կատարման իր պարտականությունը՝ հաճախորդին փոխանցելով խոստացված ապրանքը կամ ծառայությունը:

Ընկերությունը հանդիսանում է պետական մասնակցությամբ բազմապրոֆիլ բուժհաստատություն, և դրա հասույթը ձևավորվում է հիմնականում առողջապահական ծառայությունների մատուցումից՝ տարբեր ֆինանսավորման աղբյուրներով: Հասույթի ճանաչման քաղաքականության նպատակն է սահմանել այն սկզբունքները, որոնց համաձայն Ընկերությունը ճանաչում, չափում և ներկայացնում է հասույթը ֆինանսական հաշվետվություններում՝ համապատասխանելով ՖՀՄՍ 15 ստանդարտին:

Քաղաքականությունը կիրառվում է Ընկերության բոլոր եկամուտների նկատմամբ, ներառյալ՝

- պետական պատվերի ծառայություններ;
- վճարովի բժշկական ծառայություններ;
- ապահովագրական փոխհատուցումներ;
- այլ օժանդակ եկամուտներ:

Վճարովի բժշկական ծառայությունների գծով հասույթը ճանաչվում է կատարման պարտականությունների կատարման պահին: Ստացիոնար բուժումների պարագայում հիվանդի դուրսգրումը համարվում է կատարման պարտականության ավարտ:

Պետական պատվերի շրջանակներում հասույթի ճանաչման սկզբունքը նույնն է ինչ վճարովի ծառայությունների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ հիվանդի դուրսգրման պահին Ընկերությունը վստահ չէ որ կստանա համապատասխան փոխհատուցումը:

3.11 Վարձակալություն

Ընկերությունը վարձակալված գույքի գծով ճանաչման է օգտագործման իրավունք ձևով ակտիվներ բոլոր վարձակալությունների համար, բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների: Վարձակալության չեղյալ չհամարվող ժամկետը որոշվում է պայմանագրային բոլոր օպցիոնների (օրինակ վաղաժամկետ դադարեցման կամ ձեռքբերման իրավունքը) շահավետությունը հաշվի առնելով: Ընկերությունը ճանաչում է վարձակալության գծով պարտավորություններ՝ վարձակալության գծով վճարումներ կատարելու համար և օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ, որոնք ներկայացնում են պայմանագրի հիմքում ընկած ակտիվները օգտագործելու իրավունքը: Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ներկայացվում են առանձին:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ճանաչվում են վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ (այն ամսաթիվը, երբ հիմքում ընկած ակտիվը հասանելի կդառնա վարձակալի կողմից օգտագործման համար): Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները, և ճշգրտված վարձակալության գծով պարտավորության ցանկացած վերաչափմամբ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների սկզբնական արժեքը ներառում է ճանաչված վարձակալության գծով պարտավորությունների գումարը, սկզբնավորման ցանկացած ուղղակի ծախսումներ, վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձավճարները՝ հանած ստացված ցանկացած վարձակալության խրախուսումներ: Բացառությամբ այն դեպքերի, երբ Ընկերությունը խելամտորեն հավանական է համարում, որ ձեռք կբերի վարձակալված ակտիվի նկատմամբ սեփականության իրավունքը պայմանագրի ավարտին, օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկում է գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից և վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ենթակա են արժեզրկման գնահատման:

Վարձակալության գծով պարտավորություններ

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ Ընկերությունը ճանաչում է վարձակալության գծով պարտավորությունը վարձակալության ժամկետի ընթացքում վճարման ենթակա վարձավճարների ներկա արժեքով: Վարձավճարները պարունակում են հաստատուն

վճարումները (ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումներ)՝ հանած վարձավճարից նվազեցման ենթակա վարձակալության խրախուսումը, վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, գումարները, որոնք սպասվում է, որ կվճարվեն վարձակալի կողմից՝ մնացորդային արժեքի երաշխիքի ներքո: Վարձավճարները ներառում են նաև գնման օպցիոնի իրագործման գին, երբ Ընկերությունը խելամտորեն համոզված է, որ կիրագործի այդ օպցիոնը, և վարձակալությունը դադարեցնելու հետ կապված տուգանքների վճարումներ, եթե վարձակալության ժամկետն արտացոլում է վարձակալությունը դադարեցնելու օպցիոնի իրագործումը: Փոփոխուն վարձավճարները, որոնք կախված չեն ինդեքսից կամ դրույքից, ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, որի ընթացքում տեղի է ունենում այդ վճարումներին հանգեցնող դեպքը կամ իրավիճակը:

Վարձավճարների ներկա արժեքը հաշվելիս Ընկերությունն օգտագործում է վարձակալության սկզբի ամսաթվին լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը, եթե վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը հնարավոր չէ հեշտությամբ որոշել: Մեկնարկի ամսաթվից հետո վարձակալության գծով պարտավորության գումարը ավելացվում է՝ վարձակալության գծով պարտավորության տոկոսը արտացոլելու համար, և նվազեցվում է՝ կատարված վարձավճարները արտացոլելու համար: Վարձակալության գծով պարտավորության հաշվեկշռային արժեքը վերաչափվում է, եթե տեղի են ունենում պայմանագրային դրույթների վերափոխումներ կամ վերանայվում է որևէ գնահատական:

Կարճաժամկետ վարձակալություններ և փոքրարժեք ակտիվների վարձակալություններ

Ընկերությունը կիրառում է կարճաժամկետ վարձակալությունների ճանաչման բացառությունը կարճաժամկետ վարձակալությունների համար (այն վարձակալությունները, որոնց վարձակալության չեղյալ չհամարվող ժամկետը վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ 12 ամիս է կամ դրանից պակաս, և չեն պարունակում գնման օպցիոն): Ընկերությունը կիրառում է նաև փոքրարժեք ակտիվների վարձակալության ճանաչման բացառությունը այն ակտիվների վրա, որոնք համարվել են փոքրարժեք նոր արտադրված ժամանակ: Կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների գծով վարձավճարները ճանաչվում են որպես ծախս՝ գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում:

4 ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Հազար դրամ	Շենքեր, շինություններ	Մեքենա սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Արտադրատնտեսական գույք, այլ	Ընդամենը
Սկզբնական արժեք					
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	384,885	456,778	187,337	74,194	1,103,194
Ավելացում	2,653,330	417,011	-	91,113	3,161,454
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,038,215	873,789	187,337	165,307	4,264,648
Ավելացում	-	117,927	-	237	118,164
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,038,215	991,716	187,337	165,544	4,382,812
Կուտակված մաշվածություն					
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	144,702	177,540	140,471	45,435	508,148
Տարվա հաշվարկ	45,098	72,544	8,391	13,526	139,559
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	189,800	250,084	148,862	58,961	647,707
Տարվա հաշվարկ	60,764	59,592	3,024	37,374	160,754
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	250,564	309,676	151,886	96,335	808,461
Հաշվեկշռային արժեք					
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,848,415	623,705	38,475	106,346	3,616,941
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,787,651	682,040	35,451	69,209	3,574,351

Հիմնական միջոցների մաշվածության ծախսը բաշխվել է վաճառքի ինքնարժեքին՝ 117,227 հազար դրամ, վարչական ծախսերին՝ 43,527 հազար դրամ (2024թ.՝ վաճառքի ինքնարժեքին՝101,771 հազար դրամ, վարչական ծախսերին՝ 37,788 հազար դրամ)։

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության հիմնական միջոցներում 311,875 հազար դրամ սկզբնական արժեքով հիմնական միջոցներ հաշվառվում են զրո հաշվեկշռային արժեքով։

Ընկերության հիմնական միջոցները հաշվետու ամսաթվի դրությամբ գրավադրված չեն։

5 ՀԵՏԱՁԳՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ

Հազար դրամ	2025թ.	2024թ.
Տարեսկզբի մնացորդ	510	552
Շահույթում կամ վնասում ճանաչված ծախս (տե՛ս ծանոթ. 18)	(123)	(42)
Տարեվերջի մնացորդ	387	510

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ

	1 հունվարի 2025թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2025թ.
Հետաձգված հարկային ակտիվներ			
Փոխհատուցումներ աշխատակիցներին	510	(123)	387
	510	(123)	387
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ	510	(123)	387

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ

	1 հունվարի 2024թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2024թ.
Հետաձգված հարկային ակտիվներ			
Փոխհատուցումներ աշխատակիցներին	552	(42)	510
	552	(42)	510
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ	552	(42)	510

6 ՊԱՇԱՐՆԵՐ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դեղորայք	70,984	79,961
Վառելիք	669	3,658
Այլ	10,058	545
	81,711	84,164

Տարվա ընթացքում ծախս ճանաչված պաշարների գումարը կազմում է 328,249 հազար դրամ: Պաշարները գրավադրված չեն:

7 ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական ակտիվներ		
Առևտրային դեբիտորական պարտքեր	127,817	54,179
	127,817	54,179
Ոչ ֆինանսական ակտիվներ		
Տրված կանխավճարներ	12	-
Այլ	1,817	1,864
	1,829	1,864
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	129,646	56,043

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Առևտրային դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

Ծառայությունների մատուցումից առաջացած առևտրային դեբիտորական պարտքի միջին տևողությունը կազմում է 31 օր (2024թ.՝ 15 օր): Առևտրային դեբիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում:

Առևտրային դեբիտորական պարտքերը հիմնականում վերաբերում եմ հաճախորդներին մատուցված բժշկական ծառայությունների գծով ապահովագրական ընկերություններից և ՀՀ Կառավարությունից ստացման ենթակա գումարներին, հետևաբար Ընկերության կողմից անհավաքագրելիության ռիսկը գնահատվում է աննշան:

Ընկերության՝ համեմատական ժամանակաշրջանի բոլոր առևտրային և այլ դեբիտորական պարտքերը վերանայվել են արժեզրկման հայտանիշների առկայության ստուգման համար:

22 ծանոթագրությունում ներկայացված են պարտքային ռիսկի և ակնկալվող պարտքային ռիսկի վերլուծության վերաբերյալ բացահայտումները:

8 ՄՆԱՑՈՐԴՆԵՐ ԴՐԱՄԱՐԿՂՈՒՄ ԵՎ ԲԱՆԿԵՐՈՒՄ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանխիկ միջոցներ	517	24
Բանկային հաշիվներ	1,693	26,116
	2,210	26,140

9 ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ

9.1 Բաժնետիրական կապիտալ

Հազար դրամ	Սովորական բաժնետոմսերի թիվը	
	2025թ.	2024թ.
1 բաժնեմաս՝ յուրաքանչյուրը 10 հազար դրամ	335,572	335,572

Ընկերության հիմնադիրն է Հայաստանի Հանրապետությունը, ի դեմս առողջապահության նախարարության, որին վերապահված են Ընկերության կողմից տեղաբաշխված 100 տոկոս բաժնետոմսերի կառավարման լիազորությունները:

Ընկերության կողմից թողարկված բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխված են, սեփականության իրավունքով պատկանում են Հայաստամի Հանրապետությանը և ամբողջությամբ վճարված են վերջինիս կողմից:

10 ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	Պայմանագիր			2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		Տոկոսա-յին ծախս
	Սկիզբ	Ավարտ	Տոկոս	Մայր գումար	Հաշվեգրված տոկոս	
«ԱԿԲԱ Լիզինգ ՎԿ» ՓԲԸ						
Լիզինգ	4/07/25	4/07/28	15.0%	60,462	257	5,257
				60,462	257	5,257

11 ԱԿՏԻՎՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՇՆՈՐՀՆԵՐ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տարեսկզբի մնացորդ	229,075	332,943
Ավելացում	15,627	3,636
Տարվա ընթացքում օգտագործում	(106,252)	(107,504)
Տարեվերջի մնացորդ	138,450	229,075

2025թ. ընթացքում Ընկերությունը «Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության» հիմնադրամից անհատույց ստացել է 150 կՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգ՝ 15,627 հազար դրամ արժեքով:

12 ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	78,864	117,314
Ստացված կանխավճարներ	240	-
Վճարվելիք հարկեր և պարտավորություններ	16,143	10,546
Փոխհատուցումներ աշխատակիցներին	62,879	2,867
	158,126	130,727

Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Ընկերությունն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություններ, որոնք ապահովում են բոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:

13 ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՇՆՈՐՀՆԵՐ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տարեսկզբի մնացորդ	15,172	10,648
Տարվա ընթացքում ստացված միջոցներ	90,975	88,751
Տարվա ընթացքում օգտագործում	(88,013)	(84,227)
Տարեվերջի մնացորդ	18,134	15,172

ՀՀ Առողջապահության նախարարությունից ստացված (ստացման ենթակա) միջոցները համարվում են որպես պետական շնորհներ, եթե չեն վերաբերում պետական պատվերի շրջանակներում իրականացված ծառայություններին:

14 ՀԱՍՈՒՅԹ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Պետպատվերով մատուցված ծառայություններից հասույթ	1,123,371	972,807
Վճարովի ծառայություններից հասույթ	397,419	344,153
	1,520,790	1,316,960

15 ՎԱՃԱՌՔԻ ԻՆՔՆԱՐԺԵՔ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հատուցումներ աշխատակիցներին	1,000,080	823,761
Դեղորայք	318,361	262,232
Մաշվածություն	117,227	96,559
Այլ	93,338	76,882
	1,529,006	1,259,435

16 ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Շնորհներից եկամուտ	194,265	191,731
Այլ	2,524	-
	196,789	191,731

17 ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հատուցումներ աշխատակիցներին	84,400	176,064
Մաշվածություն	43,550	-
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	10,094	68,825
Հարկերի գծով ծախսեր	37,718	-
Այլ	11	180
	175,773	245,069

18 ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԾԱԽՍ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	1,307	717
Հետաձգված հարկ (տե՛ս ծանոթ. 5)	123	42
	1,430	759

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է հետևյալ կերպ.

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ-ների)	5,786		4,187	
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2024թ.՝ 18%)	1,041	18.0	754	18.0
(Չհարկվող եկամուտ)/ չնվազեցվող ծախսեր, զուտ	389	6.7	5	0.1
Շահութահարկի գծով ծախս	1,430	24.7	759	18.1

19 ՀԵՏՀԱՇՎԵԿՇՌԱՅԻՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվետու ամսաթվից հետո, բայց մինչև հաշվետվությունների վավերացումը՝ 2026թ. փետրվարի 28-ին ԱՄՆ և Իսրայելի ռազմական ուժերը հարձակում են սկսել Իրանի վրա, որին հաջորդել են հակահարվածներ տարածաշրջանային տարբեր պետությունների ուղղությամբ: Այս ռազմական էսկալացիան կարող է զգալի հետևանքներ ունենալ Հայաստանի Հանրապետության ողջ տնտեսության վրա, քանի որ շատ նշանակալի են Հայաստանի առևտրատնտեսական կապերը և՛ Իրանի, և՛ ռազմական գործողություններում ներգրավված այլ երկրների հետ:

Ընկերությունը չունի ուղղակի առևտրային գործընկերներ ռազմական գործողություններում ներգրավված տարածաշրջանային երկրներում, սակայն այս հակամարտության լայնամաշտաբ ազդեցությունը կունենա որոշ հետևանքներ նաև Ընկերության գործառնությունների վրա: Ղեկավարությունը շարունակաբար վերլուծում է էսկալացիայի ազդեցությունը Ընկերության գործունեության արդյունքների վրա, սակայն ֆինանսական հաշվետվությունների վավերացման ամսաթվի դրությամբ հնարավոր չէ իրականացնել արժանահավատ քանակական գնահատումներ:

20 ԿԱՐԵՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ ԵՎ ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

20.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Ընկերությունն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետներ

Ղեկավարությունը կատարել է հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետների գնահատում: Ղեկավարության համոզմամբ գնահատված հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետներն էականորեն չեն տարբերվում այդ ակտիվների տնտեսական կյանքից: Եթե հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների փաստացի օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա ֆինանսական հաշվետվությունները կարող են էականորեն տարբերվել:

20.2 Կարևոր դատողություններ

Ստորև ներկայացված են ղեկավարության՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված դատողությունները, որոնք ամենաէական ազդեցությունն ունեն ֆինանսական հաշվետվությունների վրա:

Հետաձգված հարկային ակտիվների ճանաչումը

Այն չափը, որով կարող է ճանաչվել հետաձգված հարկային ակտիվ, կախված է այն հավանականության գնահատումից, թե արդյո՞ք ապագայում հասանելի կլինի եկամուտ, որի դիմաց կիրացվեն նվազեցման ենթակա ժամանակավոր տարբերությունները և նախորդ ժամանակաշրջաններից բերված հարկային վնասը: Ի լրումն, անհրաժեշտ է էական դատողություն հարկային միջավայրում իրավական և տնտեսական սահմանափակումների և անորոշությունների գնահատման ժամանակ:

Վարձակալություն

- Վարձակալության ժամկետի որոշումը վարձակալության պայմանագրերի համար, որտեղ Ընկերությունն հանդես է գալիս որպես վարձակալ, ինչպես նաև, արդյոք Ընկերությունը հիմնավորապես համոզված է, որ կօգտագործի վարձակալության օպցիոնները:
- Վարձակալության պարտավորության չափման համար օգտագործվող վարձակալի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքի որոշումը:

Ակնկալվող պարտքային կորուստների գնահատումը

Ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման պահուստի գնահատումը ֆինանսական ակտիվների բոլոր դասերի համար պահանջում է դատողություն, մասնավորապես՝ ապագա դրամական հոսքերի գումարների և ժամկետների գնահատումը՝ արժեզրկման գծով վնասների որոշման և պարտքային ռիսկի զգալի աճի գնահատման ժամանակ: Այս գնահատումները պայմանավորված են մի շարք գործոններով, որոնց փոփոխությունները կարող են հանգեցնել ԱՊԿ տարբեր մակարդակների: Ընկերության՝ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկները իրականացվում են տարբեր մոդելներով, որոնց հիմքում ընկած են մի շարք ենթադրություններ՝ փոփոխական մուտքային տվյալների ընտրության և նրանց փոխկապակցվածության վերաբերյալ:

21 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

21.1 Էական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3-ում:

21.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներն ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	127,817	54,179
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	2,210	26,140
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	130,027	80,319

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբեր ի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով պահվող ֆինանսական պարտավորություններ		
Վարձակալություն	59,248	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	78,864	117,314
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	138,112	117,314

22 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Ընկերությունը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են՝ պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Ընկերությունը ներգրավված չէ սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների ակտիվ առքուվաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Ընկերությունը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ընկերությունը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Ընկերության պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից՝ ներառյալ բանկերում պահվող դրամական միջոցները և դրանց համարժեքները և առևտրային և այլ դեբիտորական պարտքերը:

Պարտքային ռիսկը կառավարվում է խմբային հիմունքով՝ ելնելով Ընկերության պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունից և ընթացակարգերից:

Բանկերում պահվող դրամական միջոցների մնացորդների մասով պարտքային ռիսկը կառավարվում է ավանդները տարբեր բանկերում պահելու միջոցով և բարձր վարկանիշ ունեցող ֆինանսական հաստատություններում պահելու միջոցով:

Առևտրային դեբիտորական պարտքեր

Ընկերությունը բոլոր առևտրային դեբիտորական պարտքերի համար կիրառում է ՖՀՄՍ 9-ի պարզեցված մոդելը. «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների ճանաչում», քանի որ այս դեբիտորները չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ:

Ակնկալվող պարտքային կորուստները չափելիս առևտրային դեբիտորական պարտքերը գնահատվել են հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ: Դրանք խմբավորվել են՝ ելնելով ժամկետանց օրերից:

Երբ հավանական չէ առևտրային դեբիտորական պարտքերի հավաքագրումը, դրանք դուրս են գրվում (ապաճանաչվում են):

Դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստների մանրամասները ներկայացված են ծանոթագրություն 6-ում:

բ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Ընկերությունն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները: Ընկերությունը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է Ընկերության ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները: Աղյուսակը պատրաստված է ֆինանսական պարտավորությունների չզեղչված դրամական միջոցների հոսքերի հիման վրա՝ հաշվի առնելով ամենավաղ ամսաթիվը, երբ Ընկերությունը ստիպված կլիներ մարել այդ պարտավորությունները:

2025թ.

	Անտոկոս	Գործիքներ հաստատուն տոկոսադրույքով	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք (%)		*15%*	
Մինչև 6 ամիս	39,432	9,350	48,782
6 ամսից մինչև 1 տարի	39,432	9,350	48,782
1 տարուց ավելի	-	40,548	40,548
	78,864	59,248	138,112

2024թ.

	Անտոկոս	Գործիքներ հաստատուն տոկոսադրույքով	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք (%)			
Մինչև 6 ամիս	58,657	-	58,657
6 ամսից մինչև 1 տարի	58,657	-	58,657
	117,314	-	117,314

Ընկերությունն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը: Ընկերության դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը ցածր են, քան անհրաժեշտ դրամական արտահոսքերը:

23 ԿԱՊԻՏԱԼԻ ՌԻՍԿ

Ընկերությունն իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունը և բաժնետերերին բավարար եկամուտ մատակարարի:

Ընկերության կապիտալը կազմված է սեփական կապիտալից, որը ներառում է թողարկված կապիտալն ու կուտակված շահույթը:

Ղեկավարությունը գնահատում է Ընկերության կապիտալի պահանջները, որպեսզի ապահովի ընդհանուր ֆինանսավորման էֆեկտիվ կառուցվածք՝ խուսափելով չափազանց մեծ լծակավորումից (լեվերիջ): Հաշվի են առնվում Ընկերության վարկերի տարբեր դասերի ստորադասության մակարդակները: Ընկերությունը կառավարում է կապիտալի կառուցվածքը և դրանում ճշգրտումներ է կատարում՝ ելնելով տնտեսական պայմանների փոփոխություններից և համապատասխան ակտիվների հետ կապված ռիսկի բնույթից: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ ճշգրտելու նպատակով Ընկերությունը կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող շահաբաժնի գումարը, վերադարձնել կապիտալը բաժնետերերին, թողարկել նոր բաժնետոմսեր կամ վաճառել ակտիվները՝ պարտքը նվազեցնելու համար:

Ընկերությունը վերահսկում է կապիտալը՝ կիրառելով «զուտ պարտքի» և «ճշգրտված սեփական կապիտալի» հարաբերակցությունը.

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Զուտ պարտք		
Ընդհանուր փոխառություններ	-	-
Հանած՝ մնացորդներ դրամարկղում և բանկերում	(2,210)	(26,140)
	(2,210)	(26,140)

Ճշգրտված սեփական կապիտալ		
Ընդհանուր սեփական կապիտալ	3,413,040	3,408,847
Գումարած՝ ստորադաս վարկ	-	-
	3,413,040	3,408,847
Զուտ պարտքի և ճշգրտված սեփական կապիտալի հարաբերակցության գործակից	(0.00)	(0.01)

24 ՊԱՅՄԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

24.1 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Ընկերությունը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Ընկերության գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

24.2 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

25 ԿԱՊԱԿՑՎԱԾ ԿՈՂՄԵՐ

25.1 Վերահսկողություն

Ընկերության հիմնադիրն է Հայաստանի Հանրապետությունը, ի դեմս առողջապահության նախարարության, որին վերապահված են Ընկերության կողմից տեղաբաշխված 100 տոկոս բաժնետոմսերի կառավարման լիազորությունները (տե՛ս ծանոթ. 8):

25.2 Գործարքներ ղեկավարության հետ

Ընկերությունը հանդիսանում է պետական մասնակցությամբ կազմակերպություն, որի բաժնետոմսերի 100%-ը պատկանում է Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս ՀՀ առողջապահության նախարարության:

Համաձայն ՖՀՄՍ (IAS 24) «Կապակցված կողմերի բացահայտումներ» ստանդարտի, Ընկերության կապակցված կողմերն են՝

- Հայաստանի Հանրապետությունը և պետական կառավարման մարմինները,
- պետության կողմից վերահսկվող, համատեղ վերահսկվող կամ էական ազդեցության ներքո գտնվող կազմակերպությունները,
- Ընկերության հիմնական ղեկավար անձնակազմը,
- հիմնական ղեկավար անձնակազմի մերձավոր ընտանիքի անդամները և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները,

Պետության կողմից վերահսկվող կազմակերպությունների հետ գործարքները հիմնականում իրականացվել են Ընկերության բնականոն գործունեության շրջանակներում և սովորական շուկայական պայմաններով:

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը, որը ներառված է «Հատուցումներ աշխատակիցներին» հոդվածում.

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ և պարգևատրումներ	13,235	13,772
	13,235	13,772